ԲԱՅԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

Վարդենիսի բարբառում բայը իր կազմությամբ, կիրառությամբ որոշակի առանձնահատկություններ է դրսևորում ինչպես անդեմ կամ դերբայական ձևեր, այնպես էլ դիմավոր կամ եղանակային ձևեր կազմելիս:

Վարդենիսի բարբառը ունի հինգ դերբայ՝ անորոշ, վաղակատար, հարակատար, ենթակայական և ժխտական:

Անորոշ դերբայը բարբառում կազմվում է -ել և -ալ վերջավորություններից: Ինչպես արդի գրական հայերենում, այնպես էլ Վարդենիսի բարբառում ամեն մի բայի հիմք կարող է լինել պարզ և ածանցավոր:

Համապատասխան վերջավորությունները ավելանում են նշված բայահիմքերի վրա:

Վարդենիսի բարբառում անկատար և ապառնի դերբայներ չկան: Անկատար դերբայի երկրորդական բաղադրյալ ժամանակի -էլիս, -ալիս համակատար վերջավորությունների փոխարեն հանդես է գալիս -ուց վերջավորությունը, որն անորոշ դերբայի բացառական հոլովածևն է: Այսպես գնալիս-էթալուց, վազելիս-վազելուց:

Ապառնի դեբայի իմաստն արտահայտում են պայմանական կամ ենթադրական եղանակի ապառնի կամ անցյալի ապառնի ժամանակները: Նման երևույթ չկա հայերենի մյուս բարբառներում, օրինակ՝ գրական հայերեն-Տեղ հասնելուն պես երգելու եմ: Վարդենիսի բարբառ-հրմա խասանք՝ տեղ, կըյերք՝եմ: Անորոշ դեբայի սեռական հոլովը չպետք է շփոթել ապառնի դերբայի հետ: Դրանց տարբերությունը պարզորոշ երևում է դերբայի նախադասության մեջ գործածելիս՝ նրա արտահայտած իմաստից:

Գործածվում է «Յես կըյերքեմ», «Յես կը խաղամ» ձևեր, բայց ոչ՝ «Ես երգելու եմ» կամ «Ես խաղալու եմ»: Բարբառում կիրառվող գ՛որէլու և վառէլու բառերը ոչ թե ապառնի դերբայներ են, այլ՝ անորոշ դերբայի սեռական հոլովածևեր:

ՎԱՂԱԿԱՏՍՐ ԴԵՐԲԱՅ

Վաղակատար դերբայը ցույց է տալիս կատարված, ավարտված գործողություն և եմ, ի օժանդակ բայի հետ կազմվում է սահմանական եղանակի վաղակատար և անցյալի վաղակատար ժամանակներ:

Ինչպես՝ Յերքերեմ, յերքեր ես, յերքերա
Երգել եմ, երգել ես, երգել է } վաղակատար

Յերքեր ի, յերքեր իր, յերքեր էր
Երգել էի, երգել էիր, երգել էր } անցյալի վաղակատար

Բարբառում Վաղակատար դերբայը կազմվում է -ը վերջավորությամբ, որը դրվում է ինչպես անկատարի, այնպես և անցյալի հիմքի վրա և նմանվում են անորոշ դերբային:

ՀԱՐԱԿԱՏՍՈՐ ԴԵՐԲԱՅ

Հարակատար դերբայն արտահայտում է այնպիսի գործողություն, որը վերածվել է վիճակի, դրության: Այդ յուրահատկության պատճառով է, որ հարակատար դերբայը սակավ մասնակցություն է ունենում ժամանակային ձևերի կազմությանը և ինչպես արդի գրական հայերենում ներգործական սեռի բայերն ընդհանրապես հարակատար ժամանակներ չեն կազմում:

Հարակատար դերբայը Վարդենիսի բարբառում կազմվում է -ուկ մասնիկով: Ինչպես մյուս դերբայները, հարակատար դերբայը ևս քերականական – նյութական արտահայտություն է ստանում բայասեռի և դրանից բխող խնդրառության կարգերում: Այն ևս մյուս դերբայների նման ուղիղ խնդիր է ընդունում, ինչպես՝ հաշկեր խրտիուկ իսան (աչքերը խփած մարդ), գ'ըլօխ ջառթուկ սալդաթ (գլուխը ջարդած գինվոր), փուսուլեն կուրսուկ ջադու պառավ (խելքը կորցրած վիուկ պառավ):

Ստնելով անկախ դերբայների խմբի մեջ, հարակատար դերբայը գործողության հետ միաժամանակ արտահայտում է այլ խոսքի մասի իմաստ (հատկապես ածականի): Դրա հետևանք է, որ հարակատար դերբայը՝ ածականական հատկանիշին համապատասխան, հանդես է գալիս ածականին հատուկ շարահյուսական կիրառություններով (որոշակի, ձևի պարագա, ստորոգելիական վերադիր): Այսպես՝

Ք'նուկ մառթը զառթնավ-քնած մարդը զարթնեց (որոշիչ)
Խրոօվուկ նստավ հոտ տեղ-խռռված նստեց իր տեղը (ձևի պարագա): Կնուճի կոթն կօրոոուկ ա-կնուճի կոթը կոտրված է (ստորոգելիական վերադիր):

Անհրաժեշտ է հիշատակել հարակատար դերբային վերագրվող մեկ այլ կարևոր հատկանիշի մասին ևս:

Մի դեպքում հարակատար դերբայը օժանդակ բայի հետ արտահայտում է ներկայի իմաստ, մեկ այլ դեպքում ցույց է տալիս անցյալի ժամանակային հատկանիշ: Այսպես՝ մռռսուկա. ք'ոնուկա. ըէառուկա-մրսած է, քնած է, բեզարած է (ներկա ժամանակ):
Իսկ՝ Տունը ք'անդուկ ա-տունը քանդված է (անցյալ ժամանակ):

ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ

Ենթակայական դերբայը կազմվում է -օղ վերջավորությամբ, որը դրվում է ե խոնարհման բայերի անկատարի, ա խոնարհման բայերի՝ կատարյալի հիմքի վրա:

Այսպես՝ գ'որօղ, նստող, փախնօղ, վաղօղ-գոող, նստող, փախչող, վազող (անկատարի հիմք) կառքրդօղ, խաղցօղ, հավատացօղ, գ'ացող-կարդացող, խաղացող, հավատացող, գնացող-(կատարյալ հիմք):

Ի տարբերություն անորոշ դերբայի, որն ցույց է տալիս գործողության ընդհանուր գաղափար (գործողության անուն), ենթակայական դերբայը ցույց է տալիս գործողի, մի բան անողի կարգ): Ինչպես գիտենք գործողի անվան գաղափարը հայերենում արտահայտվում է ոչ միայն ենթակայական դերբայով: Հաճախ այդ գաղափարը արտահայտվում է տարբեր ածանցներով (ան, իկ, իչ, որդ, ու, ուն, վոր): Այսպես՝ կծան, գ'ոնկան, փոոկիչ, մատնիչ, ճոբ'նավոր-կծան, զարկան, փրկիչ, մատնիչ, ճգնավոր:

Ինչպես տեսնում ենք ոչ բոլոր, ածանցներն են բարբառում կիրառվում և նոր բառեր կազմում: Ենթակայական դերբայը, անկախ նրանից, թե նախադասության ինչ անդամի պաշտոնով է հանդես գալիս, գոյականաբար է կիրառվում, թե՝ ածականաբար, ուղիղ խնդիր է պահանջում: Այսպես՝ Տուն շինօղ մառքրն հա՛ն էլ հաջողություն կունենա-Տուն շինող (կառուցող) մարդը միշտ էլ հաջողություն կունենա:

Ենթակայական դերբայի մեջ քանի որ գերիշխողը առարկայական իմաստն է, ուստի նա ինքնին գոյական է, և շարահյուսական կիրառություններում հանդես է գալիս գոյականին բնորոշ քերականական կարգերով, դառնալով (ենթակա, որոշիչ, հատկացուցիչ): Այսպես՝

ա) ենթակա -Լավ շախմատ խաղաղող ա ամտք-լավ շախմատ խաղացող է պետք:

բ) Որոշիչ-Սօվորող երէխեն զատմրնից կէրէվա-սովորող երեխան զատից (հեռվից) երևում է:

գ)հատկացուցիչ-Ըսաանվորի ջանոնանոն մէշից գ'ուտանն-Սպանվողի մարմինը անտառից գտան:

ԺԽՏԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ

Ժխտական դերբայը հանդես է գալիս պայմանական, հարկադրական եղանակների ժխտական խոնարհաձևերում և կազմվում է անորոշ դերբայից՝ նրա վերջավորության անկմամբ:

Ստորև ներկայացնում ենք պայմանական կամ ենթադրական եղանակի կազմությանը և դրա դրական և ժխտական խոնարհումը:

Դրական խոնարհում

Սաաոնի	Անցյալ ապառնի
կըգ'ոեմ կըկառքամ	կըգ'ըրի կըկառքի
կըգ'ոեն կըկառքան	կըգ'ըրիր կըկառքիր
կըգ'ըրա կըկառքա	կըգ'ըրեր կըկառքեր

Ժխտական խոնարհում

Սաաոնի	Անցյալ ապառնի
չեմ գ'ըրե չեմ կառքա	չի գ'ըրե չի կառքե
չես գ'ըրե չես կառքա	չիր գ'րե չիր կառքե
չըգ'ըրա չըկառքա	չէր գ'ըրե չէր կառքե

Բարբառն ունի երկու խոնարհման բայեր՝ ե և ա (պարզ և ածանցավոր): Օժանդակ բայի ներկան կազմվում է եմ, են,ա, ենք', եք', են օժանդակ բայերով, որոնք ի տարբերություն արդի գրական հայերենի, գրվում է բայահիմքի հետ միասին (կօ կը գ'ըրեմ, կօ կը գ'ըրես, կօ կը գ'ըրա)

Ինչպես տեսնում ենք սահմանական եղանակի ներկա ժամանակը Վարդենիսի բարբառում հատուկ ձևավորում ունի: Այսպես՝ կը կառքամ նշանակում է կարդում եմ ընդհանրապես, իսկ եթե ասվում է կօ կը կառքամ արդեն ներկա պահին կատարվող գործողություն է ցույց տալիս՝ այսինքն հիմա՝ խոսելու պահին կարդում եմ:

Այս երևույթը՝ այսինքն կրկնակի եղանակիչի կազմությամբ ներկա (կօ կը) կան և կիրառելի են անգլերենում և թուրքերենում, ինչպես նաև հայերենի արևմտյան խմբակցության բարբառներում (հատկապես Պոլսի բարբառում):

Նման ձևով ներկա ժամանակի կազմությունը ընդունված է կոչել ներկա շարունակական ժամանակ, որը և ստեղծում է շարունակական ներկայի և անկատարի հատուկ ձևեր՝ կը գ'ըրեմ-կը գ'ըրի-կօ կը գ'ըրեմ, կօ կը կըգ'ըրի այսինքն՝ կը գ'ըրեմ, կը գ'ըրի-արտահայտում է գրում եմ, գրում էի գործողություն իմաստն անորոշ և ներկայի իմաստը մթագնված է, իսկ եթե ասում ենք կօ կը գ'ոեմ ապա այս դեպքում ցայտուն կերպով երևում է ներկա ժամանակի իմաստը՝ այսինքն հիմա, խոսելու պահին գրում եմ:

Ինչպես նշված կը գ'ոեմ, այնպես էլ կը կառքամ պարզ բայերը շարահյուսական կիրառություններում (նախադասություններ կազմելիս և խոսքի մեջ) արտահայտում են պայմանական կամ ենթադրական եղանակի ապառնիի իմաստ: Այսպես կը գ'ոեմ, կը կառքամ ավելի շատ արտահայտում են գրելու եմ պիտի գրեմ կամ կարդալու եմ, պիտի կարդամ, քան՝ գրում եմ, կարդում եմ ներկայի իմաստ:

Բարբառի բայի խոնարհման համակարգը արժեվորելիս չի կարելի անտարբեր անցնել քերականական մի երևույթի մասին ևս:

Հասկանալ (խասկընալ) բայը եղանակային ձևերի կազմության ժամանակ սահմանական եղանակի ներկան կազմում է առանց նախադաս կը եղանակիչի, որը յուրահատուկ է Վարդենիսի բարբառի ներկայի կազմությունը:

Մեր ասածի ճշտությունը բնութագրելու և ապացուցելու համար ցույց տանք այն խոնարհման համատեքստում:

Սահմանական եղանակ

Ներկա

կը խասկընամ (հասկանում եմ)	կը խասկընանք[1] (հասկանում ենք)
կը խասկընաս (հասկանում ես)	կը խասկընաք[1] (հասկանում եք)
կը խասկընա (հասկանում է)	կը խասկընան (հասկանում են)

Անցյալ անկատար

կը խասկընի (հասկանում էի)	կը խասկընինք[1] (հասկանում էինք)
կը խասկընիր (հասկանում էիր)	կը խասկընիք[1] (հասկանում էիք)
կը խասկըներ (հասկանում էր)	կը խասկընին (հասկանում էին)

Ժխտական խոնարհման դեպքում սահմանական եղանակի ժամանակները կազմվում են օժանդակ բայի ժխտական ձևերով և դերբայներով:

Սահմանական եղանակի ներկա, անցյալ անկատար և հարակատար ժամանակի դեպքում «չը» ժխտական նախածանցը հավասարապես գործածվում է ինչպես «կը» եղանակից հետո՝ կը չեմ նըստե (սահմանական եղանակի ներկա ժամանակ) և «պըտի» եղանակիչից առաջ՝ «չըպըտի նըստեմ» (հարկադրական եղանակ):

Սակայն բացառված չէ նաև այն հանգամանքը, որ «չը » ժխտական մասնիկը վերոնշյալ եղանակներում (սահմանական եղանակ ներկա, անցյալի անկատար և հարկադրական եղանակներ) դրվի անմիջապես բայասկզբին (կը չընըստեմ- նուսնը՝ կը չեմ նըստե-ի իմաստն է արտահայտում) և պրտի չընըստեմ-չրպրտի նըստեմ-ի իմաստն է արտահայտվում: